

ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ԱՄԻՐՂՈՎԼԱԹԻ

Հովհաննիսյան Հ.Հ.

Ատամնաբուծությունը բժշկության մյուս ճյուղերի կողքին միջնադարյան Հայաստանում հասել է որոշ զարգացման:

Ատամնաբուծության մասին դեռևս չուսումնասիրված հետաքրքրական տվյալներ կան միջնադարյան մատենագրության մեջ՝ հատկապես 15-րդ դարի հայ Բժշկապետ Ամիրղովլաթ Ամասիացու աշխատություններում: Բազմահմուտ բժիշկ Ամիրղովլաթն իր աշխատությունները գրելիս օգտագործել է հարուստ գրականություն և տեղեկություններ քաղել բազմաթիվ բժիշկների աշխատություններից:

Ամիրղովլաթ Ամասիացին իր «Օգուտ բժշկության» գրքում նկարագրել է բերանի խոռոչի և ատամների այն հիվանդությունները, որոնք հայտնի են եղել նրա օրոք:

Հատուկ ուշադրություն նվիրելով բերանի հիվանդություններին, դրանք կապել է օրգանիզմի ընդհանուր վիճակի հետ: Ինչպես մյուս, այնպես էլ բերանի խոռոչի և ատամների հիվանդությունները Ամիրղովլաթը վերագրել է չորս հիմնական նյութերի քանակական և որակական անբարեհաջող խառնուրդի հետևանքներին՝ հետևելով այդ հարցում հին բժշկության մեջ ընդունված հումորալ ախտաբանության տեսությամբ:

Նրա աշխատությունները գրված են միջնադարյան աշխարհաբարով, որը դյուրմբունելի էր հայ ժողովրդի լայն խավերին:

Ամիրղովլաթի նկարագրած բերանի խոռոչի հիվանդությունները կլինիկական հատկանիշների տեսակետից կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. Բերանի նախադռան հիվանդություններ.
2. Լնդերի և բերանի բորբոքային գործընթացներ.
3. Բերանի ուռուցքներ.
4. Ատամների հիվանդություններ:

Բերանի նախադռան հիվանդություններին վերաբերում են շրթունքների ցաները, ճեղք-



Համաախյուր Հովհաննիսյան

վածքները և ուռուցքները: Երկրորդ խմբին վերաբերում են բերանի խոռոչի ցաները, լնդերի մեռուկային (նեկրոզային) և լնդերի թարախային գործընթացները:

Ամիրդովլաթի նկարագրած լնդերի արյունահոսության և հիվանդության հատկանիշներից երևում է, որ նա նկարագրել է թարախածորանք (պիոռես) հիվանդությունը:

Երրորդ խմբի մեջ դասվում են լեզվի ուռուցքները, իսկ չորրորդ խմբի մեջ՝ ատամների հիվանդությունների տարբեր տեսակները: Այդ հիվանդությունների նկարագրությունն այնքան ճշտորոշ է, որ նույնիսկ առանց հիվանդության անունն իմանալու, ժամանակակից բժիշկը պարզ տեսնում է դրանց հիվանդագիտական (կլինիկական) պատկերը: Հիվանդությունները նկարագրելիս նա մեջբերել է ինչպես հունական և արաբական բժիշկների կարծիքները, այնպես էլ իր սեփական դիտողությունները տվյալ հիվանդության մասին: Այդ նկարագրություններում նա ցուցաբերել է լրջամիտ և փորձված դիտողի, գիտակ հիվանդագետի (կլինիցիստ) հատկություններ: Այսպես, նկարագրելով լնդախտին նմանվող մի հիվանդություն, գրել է. «Նշան, որ ի հով է լինա, այն է, որ լինտքն արիւնի և մասն փթի և յորժամ հնանայ նա սուր լինի և տաքութիւն և կարմրութիւն չուն և -

նա և ցան հայհանտ և ուռեցն թոյլ լինի» («Օգուս բժշկության»):

Մի այլ օրինակ՝ լնդաբորբի (գինգիվիտ) նկարագիրը. «Որոնց ակռատակերը հոտի, արյունի և սևնա և խտին ավելանալու, պակասելու լինայ»:

Ամիրդովլաթը բերանի հիվանդությունների շարքում նկարագրել է լեզվի մի քանի հիվանդություններ:

Բերանի խոռոչի և լնդերի բուժման համար Ամիրդովլաթ Ամասիացին առաջարկել է ընդհանուր կարգի միջոցառումներ, օրինակ՝ սննդակարգ (դիետա), լուգանքներ (բաղնիքներ), լուծողականներ, արյունառություն, բաժակ զցել (ապիկիս արկանել) և այլն: Այս ուղղությամբ նա լայնորեն օգտագործել է այն հին բժիշկների փորձերը, ովքեր տվել են պարզ և բարդ բաղադրությամբ դեղեր: Այլ դեպքերում նա խորհուրդ է տվել դիմելու վիրաբուժական միջոցառումների: Այսպես, օրինակ բերանի խոռոչի արյունային և թարախային ուռուցքների դեպքում առաջարկել է ճեղքումներ կատարել:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում խոցային բերանաբորբի (ստոմատիտ) բուժման կոնսերվատիվ մեթոդները, որոնք արժանի են առանձին ուշադրության: Հետևելով Ռուֆոսի, Սահակի և այլոց ցուցումներին նա հանձնարարել է խոցային ստոմատիտների հետևյալ բուժումը՝ ծամել դանդուռ, մաքրած նուշ, ապա լնդերին քսել նշայուղ, ողողել, լուծողական ընդունել, դնել տաք հաց, լնդերին զմուռ քսել: Ավելի պարզ բուժման նպատակահարմար մեթոդ է նաև կոմպրեսի կիրառումը, ուռուցքների դեպքում՝ զմուռ քսելը: Այս միջոցները գործածվում են նաև ներկայումս:

Գինգիվիտների քրոնիկական դեպքերում Ամիրդովլաթն առաջարկել է նաև լնդերի պտուկների ճեղքում և մրգաջրով ողողում: Բերանի ուռուցքի ախտապատճառը (էթիոլոգիա) շարադրելու ժամանակ նա հետևել է Սապիթ Կուտանին, որի կարծիքով արյան և մաղձի խառնուրդի ավել-



ցուկները հավաքվելով բերանի խոռոչում առաջացնում են կարմիր ուռուցքներ: Այս ուռուցքները Ամիրդովլաթը բաժանել է սուր, արագ բուժվող և քրոնիկական ընթացք ունեցողների: Սուր ընթացքով ուռուցքները ցավագին են և առաջացնում են բարձր ջերմություն: Հետևելով Սապիթ Կուռանին, առաջարկել է բորբոքային դեպքերում բաժակ զցել, ուռուցքներին քափուր, քացախ և վարդաջրի խառնուրդ քսել կամ հանձնարարել է այնպիսի դեղորայք, որոնք նպաստում են բերանի խոռոչի թարախակույտի հասունացմանը և բացվելուն: Երբ այդ միջոցներն էլ չեն օգնում, Ամիրդովլաթն առաջարկել է վիրաբուժական միջամտություն: Նրա կողմից նկարագրած բերանի ուռուցքը համապատասխանում է պարուլիսի կլինիկական պատկերին:

Անվանի բժշկի առաջարկած բուժման միջոցների մեծ մասը համարյա նման են ժամանակակից մեթոդներին:

Բերանի հիվանդությունների շարքում Ամիրդովլաթը նկարագրել է լեզվի 8 տեսակ հիվանդություններ, որոնք բաժանել է 2 խմբի.

1. Լեզվի ուռուցքներ և լեզվի բորբոքային գործընթացներ: Այս դեպքում խորհուրդ է տվել կիրառելու վիրաբուժական միջամտություն: Տիրապետելով բերանի խոռոչի վիրաբուժական տեխնիկային, նա առաջարկել է հետացնել շրթունքների սնկերը (պոլիպ), որոնց կլինիկական պատկերն ըստ հեղինակի, հետևյալն է. «Մունկն այն է, որ գետ խաղողի հատ ի պոկուքն բուսնի և կախվի»: Նա առաջարկել է այդ հիվանդությունը բուժել վիրահատությամբ. «Լան այն է, որ ճղքեն և գավելի միսն հանեն և Բ կոմանե կտրեն, որ չի ծոի պոկուքն»:
2. Հիվանդության երկրորդ խմբի նկարագրության ժամանակ հեղինակն առաջարկել է սովորական հակաբորբոքային բուժում՝ նշանակելով կակղացնող միջոցներ: Խորհուրդ է տվել հետևել բերանի խոռոչի մաքրությանը՝ ատամները մաքրել կավիճով, եղջյուրի այրած փոշիով, ծեծած մարջանով, որոնք սպիտակեցնում են ատամները, հետացնել ատամի քարերը, որենցից առաջացած հիվանդությունը նա անվանել է «ակոախտ»:

Ատամների հիվանդությունները Ամիրդովլաթ Ամասիացին բաժանել է մի քանի խմբի: Առաջին խմբին պատկանում են այն հիվանդությունները, որոնք առաջացնում են լնդերի ուռուցք և ցավ: Կլինիկական այս պատկերը հիշեցնում է ատամների բորբոքումը: Նշելով մի շարք բժիշկների կարծիքները, նա առաջարկել է. «Լավն այն է, որ գակոատակերն ճեղքես և լուծումն առնես մրգաջրով», այսինքն՝ կտրվածքներ կատարել հիվանդ ատամի շուրջը, որից հետո ողողել մրգաջրով:

Ատամների հիվանդությունների երկրորդ խումբը բնորոշվում է ատամների գույնի փոփոխություններով, ատամների նեխումով և վատ հոտով. «Նշան փշրելու այն է, որ ծակել է և որն կերվել է, և գուն ակոային սևցել է, և հոտած հոտ գայ յիրմէն»: Այս կլինիկական պատկերը համանման է ատամի փտախտին (գանգրենա), որն, ըստ Ամիրդովլաթի, ունի սուր և քրոնիկական ընթացք: Նա հանձնարարել է այդ հիվանդությունը բուժել հետևյալ մեթոդով՝ չոր դեղեր գործածել, նպատակ ունենալով չորացնել և դուրս քաշել թարախը: Նա առաջարկել է ատամի խոռոչի մեջ դնել սոճու ձյութից, գլխորից և արաբական խեժից բաղկացած խառնուրդ:

Երրորդ խումբը համանման է պուլպիտին, որի դեպքում խորհուրդ է տվել ատամի խոռոչի մեջ դնել հետևյալ խառնուրդը՝ աֆիոն (1 մաս), բուսական յուղ (1 մաս), մոմ (3 մաս): Նրա կարծիքով այս խառնուրդը մեղցնում է նյարդը (ջիղ):

Անիրաժեշտ է ընդգծել, որ դեռևս 15-րդ դարում Ամիրդովլաթը մատնանշել է ատամի նյարդի հիվանդությունը: Նյարդը մեղցնելու համար առաջարկել է դեղամիջոցներ, օրինակ՝ խարել է խոռոչը, ծածկել ծեծած մարգարիտով, մաստակով՝ մի տեսակ յուրահատուկ պլումբ դնելով վրան: Այսպիսով, նա գործադրել է ատամի խոռոչի վարակազերծում՝ խարելով և լցնելով գանսազան դեղերի խառնուրդով: Նա խորհուրդ է տվել կիրառել Հոնեյսի առաջարկած հետևյալ խառնուրդը՝ մկնդեղ, կիր, գլխոր, շիբ, արջասպ, որից հետո հիվանդը պետք է համբերել մեկ ժամ, և ցավը կդադարի: Ինչպես տեսնում ենք, ատամի նյարդի մեղցնելը, ըստ հին բժիշկների, համանման է ժամանակակից մոտեցմանը: Հենվելով Սապիթ-Կուռանի սաածի վրա, նա գրել է. «Ակոային ցավն մեկ ակոայեն չէ. և յիր մսեն, որ կու ցավի»: Ուժեղ ցավերի դեպքում նա առաջարկել է, որպես շեղող միջոց՝ գլուխը լվանալ:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում հիվանդությունների չորրորդ խումբը, որի մասին նա գրել է. «Նշան շարժելուն այն է, որ ի պեղծ և ի բորբոսած գիճութենն լինի, այն է, որ յակոատակեն հոտած հոտ գայ և այն, որի ջղին թուլութենն լինայ, այն է, որ վատուժի ջղերն և ակոան վաթի շուտով»:

Պետք է ենթադրել, որ ատամի խախտվածության բնորոշ հիվանդությունը պիոռեա հիվանդությունն է, որի բուժումն, ըստ հին բժիշկների, կատարվել է մեղրով լվանալու միջոցով: Միաժամանակ Ամիրդովլաթը տվել է հետևյալ դեղամիջոցների խառնուրդը՝ շիբ, անուշադր, նշա:

Պետք է նշել, որ Ամիրդովլաթ Ամասիացու աշխատության մեջ կան ատամնաբուժությանը վերաբերող շատ հետաքրքրական նյութեր, որոնք մեծ արժեք են ներկայացնում ատամնաբուժության պատմության համար: